ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

25 հունվարի 2019 թվականի N 25-Ա

«ԱՏԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման փոփոխված նախագծի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 103 և 2018 թվականի օգոստոսի 24-ին և հոկտեմբերի 02-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրված «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» N 2007 և «Արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության» թիվ 2091.1 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ Ֆ-376/18 գրությունը, «ԱՏԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 33, 2019թ-ի հունվարի 11-ի թիվ 34 գրությունները և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՏԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՍՊԸ)՝ ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավի հանքավայրի տրավերտինների <<Ավագնու>> հանքավայրում արդյունահանման աշխատանքներ կատարելու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/350 թույլտվությունում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- գործողության ժամկետը տողում՝ «2007թ մարտի 15-ից մինչև 2031թ նոյեմբերի 24-ը» բառերը փոխարինել «41 տարի» բառերով,
- հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 10000 մ³ արդյունահանվող պաշար,
- տրամադրվող պաշարների քանակը՝ 469270 մ³ մ³ ըստ C_1 կարգի,
- ՀՀ Արարատի մարզի հանքավայրում արդյունահանման նպատակով տրամադրված կոորդինատային համակարգի 1.X=441637.4 Y=8476946 H=1133.8(-34.0), 2.X=4416409 Y=8476912 H=1128.5(-32.0), 3.X=4416436 Y=8476946 H=1122.0(-34.5), 4.X=4416476 Y=8477000 H=1109.0(-29.0) 5.X=4416528 Y=8477052 H=1102.0(-24.0), 6.X=4416550 Y=8477094 H=1099.0(-23.0), 7.X=4416504 Y=8477124 H=1108.5(-24.0), 8.X=4416438 Y=8477032 H=1118.0 (-26.0) կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝ 1.X=4416390 Y=8476824, 2.X=4416401 Y=8476812, 3.X=4416452 Y=8476878, 4.X=4416620 Y=8476960, 5.X=4416595 Y=8477155, 6.X=4416390 Y=8477126, 7.X=4416403 Y=8476896, 8.X=4416366 Y=8476846, (տրված են WGS-84 ՎԻ ՋԻ ԷՍ-84 ARMREF 02 ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով

սահմանափակված տարածք և լեռնահատկացման թիվ ԼԿ-350 լեռնահատկացման ակտի կոորդինատները՝ 1.X=4416356 Y=8476945 H=1137.0 (h=-42,0), 2.X=4416409 Y=8476901 H=1118.0(h=-23,0), 3.X=4416483 Y=8476994 H=1096.0 (h=-6.0), 4 .X=4416534 Y=8477045 H=1100.0(h=-15.0), 5.X=4416565 Y=8477100 H=1100.0 (h=-15.0), 6.X=4416501 Y=8477143 H=1101.0 (h=-16.0), փոխարինել՝ 1.X=4416390 Y=8476824 H=1099.0 (h=-9.0), 2.X=4416401 Y=8476812 H=1084.0 (h=-4.0), 3.X=4416452 Y=8476878 H=1073.0 (h=-3.0), 4.X=4416620 Y=8476960 H=1042.0 (h=-2.0) 5.X=4416660 Y=8477020 H=1039.3 (h=0) 6.X=4416595 Y=8477155 H=1047.5 (h=-7.5) 7.X=4416390 Y=8477126 H=1114.5 (h=-14.5) 8.X=4416403 Y=8476896 H=1099.0 (h=-9.0), 9.X=4416366 Y=8476846 H=1099.0 (h=-9.0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով:

2.Կատարել փոփոխություն ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավի հանքավայրի տրավերտինների <<Ավագնու>> տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-350 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1)օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքում փոփոխություն կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2)ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված տարբերակները,

3)ծանուցել «ԱՏԳ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ին, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4)ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

1/25/2019

X

VERIFIED OCSP 25-Jan-19 10:47:56 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118